

ԵԱՀԿ գրասենյակը Հայաստանում կանանց դերի վերաբերյալ շարադրությունների մրցույթի հաղթողներին մրցանակներ շնորհեց

ք. Երևան, 12 ապրիլի 2007թ. – ԵԱՀԿ գրասենյակի կողմից հայ հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ կազմակերպված շարադրությունների մրցույթի հաղթողները, այդ թվում 24 մարզային և 3 ազգային հաղթողներ, այսօր Երևանում մրցանակներ ստացան:

Չորս տարի անընդմեջ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի և ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպվող մրցույթի նպատակը գենդերային խնդիրների լուծման և Հայաստանի երիտասարդության շրջանում քննադատական մտածողության հմտությունների զարգացման խթանումն է:

«Կանանց և տղամարդկանց լիարժեք և իրական իրավահավասարությունը կարևոր է անվտանգության, բարգավաճման և կայուն ժողովրդավարության հասնելու առումով», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարացման հարցերով պատասխանատու Սվեն Հոլդարը:

«Ես ուրախությամբ էի կարդում այս շարադրությունները, որտեղ աշակերտները կիսում էին իրենց պատկերացումը հայ կնոջ դերի մասին տանը, համայնքում և երկրում և առաջարկում փոփոխություններ, որոնք նրանք կուզենային տեսնել տեղական և պետական մակարդակներում»:

Մրցույթը մեկնարկեց մարտի 8-ին՝ կանանց միջազգային օրը և ավարտվեց ապրիլի 7-ին, որը Հայաստանում տոնվում է որպես մայրության և գեղեցկության օր: Մրցույթին մասնակցեցին Հայաստանի 8 մարզերի բարձր դասարանի մոտ 500 աշակերտներ:

Արարատի մարզի Նորաբացի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Նարեկ Հովակիմյանը, որը շահել է առաջին ազգային մրցանակը, իր շարադրության մեջ գրում է. «Ես կուզենայի, որ կանայք իրենց հմտություններին համապատասխանող աշխատանք ունենային և իրենց կողքին ունենային տղամարդ, որը կկարողանար նեցուկ լինել ընտանիքին, որպեսզի կինը չկորցնեք իր կանացիությունը»:

Լոռու մարզի Վանաձոր քաղաքից Լիլիթ Վահանյանը շահեց երկրորդ մրցանակը, իսկ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքից Արփինե Ավագումյանը շահեց երրորդ մրցանակը:

ԵԱՀԿ գրասենյակի կողմից իրականացվում են մի շարք աշխատանքներ՝ Հայաստանում գենդերային հավասարությունը խթանելու համար: Գրասենյակի կողմից կիրականացվի մայիսին տեղի ունեցող խորհրդարանական ընտրությունների ժամանակ կանանց քաղաքական մասնակցության հետազոտություն՝ բացահայտելու կին թեկնածուների և նրանց ընտրողների համար գոյություն ունեցող խոչընդոտները և դասեր քաղելու, թե ինչ պետք է արվի, կանանց մասնակցությունը Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում է՛լ ավելի խթանելու համար: